


371

W-94

70

~~2257~~



2857

1 MAR 2010

ՀԱՍԿԵՌԻ

ՄԱՆՈՒԿԱԿԱՆ

ԳՐԱԳԱՐԱՆ

VIII

ԱԿՍԵՂ, ԱՐՍՏԱՂ

ԻՆՁՆ Է ՀԵՏԱՔՐԲՐՈՒՄ ԵՒ ՉԱՐԳԱՅ-
ՆՈՒՄ ՄԱՆԿԱՆ

Թարգմ. ԱՏ. ԼԻՍԻՅԵԱՆԻ.

ԹԻՖԼԻՍ

1594.

«ՀԱՍԿԵՐ»-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Ա. Բ. Գրիգորյան Կենտրոն

371

VIII

Արշակունյաց


Ա-94

ԱՆՍԷԼ ԱՐՄՏԱԼ

17X 114 Էրզրու

Ի՞նչն է ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑ.

ՆՈՒՄ ՄԱՆԿԱՆ



Թարգմ. Աս. Լիսիցեանի



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «Հեքմէտ», Մաղաթեան փող. տ. 5

1907



155
ԱԵ-Կ

(4803)

25 FEB 2013

45.377

7957-56



Խ Ա Ղ Ա Լ Ի Ք Ն Ն Բ

Մանուկների առաջին խաղալիքը ի հարկէ զընդ-
գնդանն է: Սակայն դրա փոխարէն կարելի է վերցնել
բանալիքների կապոցը և առհասարակ ամեն զնգզնգա-
ցող իր:

Այդ տեսակ խաղալիքներով երեխաները սկսում
են հետաքրքրւել արդէն 5—6 ամսւայ վրա: Մանուկը
սիրում է ժանաւանդ յատակի վրա շարտել դրանց.
ժայրը կամ դայեակը վերցնում բարձրացնում է, ժա-
նուկը կրկին շարտում է, ուրախ-ուրախ աղաղակելով
ամեն մի վայր ձգելուն, և այդ խաղը կարող է ան-
վերջ տևել, առաջացնելով մանկան մէջ անզուսպ, յաղ-
թական մի ծիծաղ:

Փոքրիկ մանկան ամենասիրելի խաղալիքներն են
այնուհետև—նետինէ կենդանիները, ծվացող տիկնիկնե-
րը: Ի նկատի առնելով որ մանուկները սովորութիւն
ունեն ամեն բանի «համը տեսնել», հարկաւոր է խոյս
տալ սե, ամուր օետինից շինած և պայծառ գոյներով
ներկւած խաղալիքներից: Ամենաանվնաս խաղալիքնե-
րը կարմիր, փափուկ նետինից շինած խաղալիքներն
են, որոնք ծծումը չեն պարունակում:

Փոքրիկ մանուկների համար պէտքովան են նաև գոյնզգոյն փոքրիկ գնդակներ, որ սեփական թելով կախ են անում օրօրոցի գլխին այնպէս, որ երեխան կարողանայ նրանց ձևներով բռնել. յետոյ նոյնպէս «փափուկ» տիկնիկներն և չթէ, կամ զամշէ կենդանիները՝ բուսական խաւով, մամուռով կամ սղոցւածքով լցւած: Բրդով կամ մագով ծածկւած կենդանիները անպէտք են, կրկին այն պատճառով, որ փոքրիկ մանուկները սովորութիւն ունեն ամեն բան բերանը դնել:

Մեծ գւարճութիւն են պատճառում երեխաներին նոյնպէս այնպիսի պարզ խաղալիքները, ինչպէս են՝ «պառկիր վեր կաց»*) և զանազան վագող, ցատկոտող և թռչող խաղալիքները (լարեղ մեքանիսով):

Մօտ 2 տարեկան երեխաները, մանաւանդ տղաները, սկսում են հետաքրքրւել և խորանարդների կառուցումով, և ամենամեծ գւարճութիւնը նրանց պատճառում է շինութեան կործանումը, երբ բոլոր խորանարդները դրդիւնով թափւում ցրւում են նրա փոքրիկ ձեռքի դիտաւորեալ հարւածից: Աղջիկները աւելի յաճախ հաւատարիմ են մնում իրենց տիկնիկներին:

3—4 տարեկան երեխաները յափշտակւում են այնպիսի խաղալիքներով, ինչպէս են «Նոյեան տապանը», «գազանանոց», «ամարանոց», «ազարակ» և սըրանց նմանները, որ ներկայացնում են կենդանիների և թռչունների հաւաքածուներ. խաղը ի հարկէ ունի կենդանանում է, երբ մասնակցում են և հասակաւոր-

*) Ինչքան էլ պոռկեցնում ես, միշտ վեր է կենում:

ները, որոնք զիտեն պատմել որպէս վայրենի, նոյնպէս և ընտանի կենդանիների կեանքի և սովորութիւնների մասին:

Այդ հասակից սկսած, տղաների և աղջիկների ձուլակները հետզհետէ աւելի և աւելի տարբերւում են: Տղաները գերադասում են ձիեր և սայլեր, որ բարձում են ամեն տեսակ կոտորած և ամուր խաղալիքներով և զէս ու զէն են քաջ տալիս, յաճախ նոյնպէս աշխատելով որ շուռ գան, «խորտակւեն»: Իսկ աղջիկները առանձին սէր են ցոյց տալիս զէպի ամեն տեսակ կահ-կարասիք— փոքրիկ մահճակալները, սեղանները, աթոռիկները և և այլն, որոնց վրա կարող են պառկեցնել կամ նստեցնել իրենց սիրելի «աղջիկներին»:

Փոքրահասակ մանուկները շատ են սիրում նաև այնպիսի խաղալիքներ, որպէս են մետաղէ ձկնիկներ, բաղեր, նաւակներ, մակոյկներ և այլն, որ կարելի է թողնել ջրի երեսին և ման բերել մագնիսի օգնութեամբ:

7—8 տարեկան տղաները սկսում են առանձնապէս հետաքրքրւել անագէ զինւորներով և առհասարակ ամեն տեսակ «զինւորական» խաղալիքներով, կառուցանում են ամրոցներ, պատերազմներ են յայտարարում իրար և խաղում են «աւազակներ»:

Այդ հասակի աղջիկները աւելի զբաղւում են եփելով, խորովելով, տանտիկնութիւն անելով, և այդ պատճառով ամենալաւ ընծաները նրանց համար, տիկնիկներից յետոյ, խաղալիք-հնոցներն ու ամեն տեսակ ամանեղէնն են:

Բացի, այսպէս ասած, «մշտտական» խաղալիքներինց, կան նաև «եղանակային» խաղալիքներ: Գարնանային և ամառային խաղալիքներն են՝ գնդակներ, մեծ օղակներ, սերսօ, թռչող օձեր, կաղապարներ աւազից դանազան ձևի իրեր կառուցանելու համար, բահեր, հորսելիներ, թիեր, բարշակներ և այլն: Իսկ աշնանային և ձմեռային երկար երեկոների ձանձրոյթից ազատելու համար լաւ են խաղեր զբաղմունքները, — ծալելը, կառուցանելը, լօտօ, կտրատելը, կպցնելը, նկարելը, գունաւորելը, հիւսելը, ծեփելը, տիկնիկների համար բաժինք կարելը:

Ի վերջոյ պէտք է նկատենք, որ երեխաները մանաւանդ սիրում են ինքնահնար խաղալիքներ, խանութից գնւած, պատրաստի խաղալիքը շատ աւելի քիչ գին ունի երեխայի աչքում, քան թէ իր ձեռքով շինւած կամ փոփոխւած, իր խաղերին յարմարեցրած մի խաղալիք: Գնեցէք երեխայի համար մի ամենակոկիկ ձի իսկական մորթով, իսկական սարքով, և միւս կողմից՝ տէք նրան մի կլոր փայտէ կտոր, չորս ձողիկներ, սև բուրդ (ամենից լաւն է, սև գուլրայի թելը, որ այնպէս գեղեցիկ դանգուր գոլորում է), և օգնեցէք, որ ինքը այդ նիւթից իր համար մի ձի շինի, — և տեսէք թէ այդ երկուսից ո՞րն է նա աւելի սիրելու: Անշուշտ իր ձեռագործը: Առաջինը շատ կատարեալ է, երեխան ոչ մի տեղ «ուղղելու», «ձեռք տալու», իր երեակայութիւնը գործադրելու առիթ չունի: Իսկ եթէ ուզենայ էլ «լաւացնել», միայն պիտի փչացնի և մեծերի յանդիմանութեանը արժանանայ: Իսկ նրա համար յաճախ

հէնց այդ «փչացած» (մեծերի խօսքով) խաղալիքն է, որ առաւելապէս սիրելի է դառնում:

Առհասարակ չի կարելի շատ խիստ վերաբերել, երբ երեխաները փչացնում են խաղալիքը: Այդտեղ երևում է ոչ թէ նրա կործանելու ախտը, որի դէպէտք է կուել, այլ հէնց հակառակը, ստեղծագործելու ձգտումը, և միւս կողմից՝ նաև «իրերի հէնց ծուծը» մտնելու յանկութիւնը: Խաղալիքը փչացնել, կտարել գրդում է երեխային հէնց այդ մանկական հարցասիրութիւնը, իմանալու ցանկութիւնը, թէ ինչիցն է շինւած նա, ինչ կայ նրա մէջ:

Խ ա ղ Ե Ր

Նաղը օգտուէտ է և անհրաժեշտ ամեն հասակի երեխաների համար: Զանազանակերպութիւն մտցնելով նրանց կեանքի մէջ, հանգստութիւն բերելով աշխատանքից յետոյ, նա միևնոյն ժամանակ հանգիստնում է մի տեսակ աշխատանք, որ թարմացնում և ամրացնում է մարմինն ու հոգին, մտածել է սովորեցնում երեխաներին, զարգացնում է նրանց մէջ հնարագիտութիւն, սրամտութիւն, երևակայութիւն, գեղասիրական ճաշակ և օրինականութեան և կարգապահութեան զգացմունք: Ընկերական խաղերը, բացի այդ, ընտելացնում են երեխաներին զսպել իրենց, յարմարել ուրիշների ցանկութիւններին և ուրիշների օգնութեանը գին դնել:

Ընկերական խաղերի մէջ չէ՞ որ բոլոր մասնակից-

ները իրարից կախում ունեն. ամեն մէկի վրա դրւած է լինում մի պարտականութիւն, որ պիտի նա ճիշտ կատարի, որպէսզի խաղը իր նպատակին հասնի: Եթէ մասնակիցներից որևէ մէկը խաղը այնպէս չը տանի, այդ իսկոյն կազգի խաղի ընդհանուր ընթացքի վրա, և միւս մասնակիցները անմիջապէս կը նկատեն այդ: Անշնորք և անվարժ մանուկը ուզի չուզի պիտի աշխատի ուղղել, որպէսզի խոյս տայ ընկերների դժգոհութիւնից և նորից ձեռք բերի նրանց համակրութիւնն: ու յարգանքը: Ինքնահաճ, դիւրագրգիռ, խարդախութեան դիմող մանուկները հարկադրւած են լինում ճշշել իրենց մէջ բնաւորութեան վատ գծերը, որպէսզի ընկերները իրենց չը վռնդեն խաղացողների շրջանից:

ՕՍմաչկոտ, անճոռնի կամ թմրած երեխաներին, որոնք խոյս են տալիս հասակակիցներից և աշխատում են չը մասնակցել ընկերական խաղերին, պէտք է ամեն կերպ խրախուսել և զրդել որ մօտենան ուրիշ մանուկներին, պէտք է զեկավարել նրանց, քաջըջել, և այդ աւելի լաւ աջողուում է անել հէնց նրանց հասակակիցներին, քան թէ հասակաւորներին:

Բայց մեծերի մասնակցութիւնը խաղերին առհասարակ շատ ցանկալի է: Սաղալիս աւելի լաւ է իմացուում երեխայի բնաւորութիւնն և ընդունակութիւնները: Շատ օգտաւէտ է խաղալ սովորեցնել և դաւեակներին. նրանց ընկերակցելը խաղերին աւելի կը մտերմացնի նրանց՝ սանիկների հետ և կը սովորե-

ցնի աւելի լաւ հասկանալ վերջիններին պէտքերը, ուրախութիւններն ու վշտերը:

Երեխաների մեծ մասը շատ է սիրում փոփոխել, դանազանակերպել խաղերը, և դրա համար հասակաւորներն էլ պէտք է գիտենան բազմաթիւ խաղեր, մանաւանդ ոչ շատ բարդ և յոգնեցնող խաղեր: Առհասարակ խաղերը երկու տեսակ են լինում. «նստած» և «շարժական»: Առաջին տեսակիցն են ամեն տեսակ դանազանակերպութիւնները լօտօի, դօմինօի և ամեն տեսակ «Ֆրեբելեան խաղերը»—այն է՝ կտրտելը, հիւսելը, կարելը, ասեղնագործելը, գունաւորելը, ծալելը, շինութիւններ կառուցանելը և այլն: Երկրորդ տեսակը կարելի է բաժանել հետեւեալ խաղերի. 1. վազվզելով, 2. նետելով, 3. վազվզելով և նետելով, 4. ցատկոտելով և 5. երգելով: Այս խաղերը աւելի լաւ է բացօդեայ խաղալ, որովհետև նրանց գլխաւոր նպատակն է, —օգնել երեխային մեծանալ առողջ, ամրակազմ և կենսուրախ, իսկ ոչ մի բան այնպէս չէ նպատուում այս բանին, ինչպէս թարմ օդը: Այդպիսի խաղերին ամեն օր պէտք է նւիրել մի քանի ժամ: Միայն ծայրայեղ դէպքում, շատ վատ կամ շատ ցուրտ եղանակին, կարելի է խաղերը տեղափոխել ծածկւած սրահները: Ոչ մի ընդարձակ դահլիճ չի կարող բռնել լայն, ծառատունկ, արևի համար բաց հրապարակի կամ դաշտի տեղը: Սենեակներում վազվզելն ու խաղալը անպատճառ առաջացնում է փոշի, որ և կուլ պիտի տան մանուկները:

Ամենաօգտաւէտ խաղերը, ի նկատի ունենալով ֆիզիքական ուժերի և կարողութիւնների ամրապն-

դումն ու զարգացումը, պէտք է համարել միաժամանակ թէ վազելուց և թէ նետելուց կազմած խաղերը, բայց զբանք բարդ են լինում, ուստի զբանցից առաջ պիտի մանուկները սովորեն աւելի պարզ խաղեր, որ միայն նետելուց կամ վազելուց են կազմած:

Վազելը ամբողջ մարմինն է ամբացնում. միայն թէ թոյլ չը պիտի տալ երեխաներին վազվզել մինչև ուժասպառ լինելը: Եթէ վազախաղերին մասնակցում են միևնոյն հասակի երեխաներ, աւելի քիչ վտանգ կայ, որ մի քանիսը, մրցումով յափշտակելով, գերյոգնեն: Իսկ եթէ խաղացողների հասակները շատ տարբեր են, անհրաժեշտ է որ մեծերն ու աւելի ուժեղները յարմարեն աւելի փոքրերին և թոյլերին:

«Նետողական» խաղերը աւելի ամբացնում են մէջքի ողնաշարը, ձեռները, աչքի մկաններն ու զարգացնում են աչքի կտրուկութիւնը: Պէտք է միայն նետել անպատճառ երկու ձեռքով էլ, մտրմինը հաւասարաչափ ամբացնելու և երկու ձեռներն միատեսակ զարգացնելու համար:

Իպրոց յաճախող աշակերտների մէջքը շատ յաճախ լինում է կռացած, իսկ ողնաշարը՝ ծուռ: Խրատներն ու յորդորները, որ ուղիղ նստեն և ուղիղ ման գան, չը կռանան և չը ծուեն, շատ քիչ են օգնում: Ի հարկէ հեշտ բան չէ միշտ յիշել, որ պէտք է մէջքը ուղիղ պահել, երբոր ամբողջ օր մարդ ստիպւած է նստած անցկացնել, կռանալով գրքերի ու տետրակների, ձեռագործի կամ դաշնամուրի վրա: Մտնաւանդ ստիպւած են լինում «մէջքը ծուել» աղջիկները: Այդ պատճառով

նով երեխաների մէջքը ուղիղ խրատներով և կորսէտներով զվար է: Ամենալաւ հակակշիռը այդ սովորութեան կարող են լինել միայն խաղերը, որոնց ժամանակ մէջքն ինքն իրան ուղղում է, չը պահանջելով երեխաներից կամքի լարում: Թող երեխաները աւելի վազվզեն, ցատկոտեն, շարժեն և զբաղեն «նետողական» խաղերով: Նետելու միջոցին մէջքը ինքն իրան անշուշտ լաւ ձգւում է: Գնդակ կամ լապտի խաղալը ամենալաւ մարզանքն է մէջքի համար, որը այդ ժամանակ հարկադրւած է լինում ամենաբազմազան դրութիւններ ընդունել: Իսկ սերքօ (օղակ), վօլան և այլն խաղալը մտնաւանդ օգտակար է այն բանով, որ ստիպում է երեխաներին ձգել ամբողջ մարմինը և գլուխը վեր բարձրացնել (օղակի կամ գնդակի թըռչիքին հետևելու համար): Այդ խաղը պէտք է երեխաները սկսեն որչափ կարելի է վաղ, 4—5 տարեկան հասակից:

Թռչելու հետ շողկապւած խաղերը չի կարելի անպայման կերպով յանձնարարել, որովհետև նրանք ամեն անգամ չեն լինում ապահով, մանաւանդ աղջիկների համար: Մտնաւանդն զէպս այդ խաղերը պահանջում են մեծ հսկողութիւն մեծերի կողմից: Նորվեգիայում՝ ի նկատի ունենալով տեղի ունեցած մի քանի դժբախտ գէպքերը, նրանք բոլորովին արգելւած են աշակերտների ազատ խաղերի հրապարակներում և թռչելու մարզանքները թոյլ են տրւում միմիայն մարմնամարզական դահլիճներում:

Իսկ երգերի հետ հիւսւած խաղերը առանձնապէս

յանկալի է տարածել, մանաւանդ 3—4 տարեկան հասակից: Այդ խաղերը մեծ մասամբ կապւած են լինում շախմատ, գեղեցիկ շարժումների հետ և, բացի ընդհանուր օգտից, այլևս այն արդիւնքն են ունենում, որ զարգացնում են երեխաների մէջ գեղեցիկ ձևեր, գողտրկութիւն, իսկ ինքն երգեցողութիւնը ամրացնում է թոքերը, զարգացնում է ձայնն ու լսողութիւնը:

Մտաւոր յարմար են ընտանիքում նաև այնպիսի խաղեր, որոնց մէջ շարժական խաղը միացած է լինում գեկլամացիայի (արտասանութեան) և երգեցողութեան հետ: Սաղը ղեկավարող հասակաւորը պատմում է երեխաներին որևէ հեքիաթ, յետոյ նշանակում է թէ երեխաներից ով հեքիաթի որ անձնաւորութեան դերը պիտի կատարի, բացատրում է ամեն մէկին նրա անելիքը և սովորեցնում է դերերը, օգտւելով այդ բանի համար պատրաստի բնագրից և հրաժշտական եղանակից կամ ինքը նորից գրելով, և վերջապէս մանուկները ներկայացնում են հեքիաթները կենդանի անձնաւորութիւններով: Այդ խաղը ասիթ է տալիս զանազան խրատական գրոյցներ անելու. մանուկները միտք են դադարեցնում ներկայացրած կենդանիների, մարդկանց և ծաղիկների ընտրութեան վրա և սովորում են օգտւել ձեռք բերած դիտութիւններից, և միևնոյն ժամանակ ինքնըստինքեան զարգացնում են իրենց ձայնն ու սովորում են գեղեցիկ կարգալ ոտանաւորները: Այս խաղը երբէք չը պէտք է շփոթել «մանկական ներկայացումներին» հետ, որոնք՝ ունենալով լաւ կողմեր, ունեն և բազմաթիւ պակասաւոր կողմեր:

Այդ խաղերը երեխաները խաղում են իրենց համար, ոչ թէ հանդիսատեսների համար, որոնք չը պէտք է էլ ներկայ լինեն:

Նկարչութիւն: Պատկերազարդ գրքեր

Փոքրիկ երեխաները մեծ մասամբ շատ են սիրում նկարել: Հէնց որ նրանց ձեռքն է ընկնում քարետախտակ ու քարեգրիչ կամ մատիտ ու թուղթ, նրանք յափշտակւած սկսում են ամեն տեսակ նկարներ ու պատկերներ գծագրել: Իսկ երբ թուղթ չեն ունենում, նկարում են պատերի վրա, զրքերում, լուսամուտների տախտակների, դռների վրա: Նկարելու սէրը արտայայտւում է նաև՝ երեխայի բերանից այնպէս յաճախ լսող խնդրիքի մէջ, որով նա դիմում է հասակաւորին. «Նկարի՛ր ինձ համար», «Նկարի՛ր այս ինչ կամ այն ինչ բանը»: Եւ երեխան կարող է երկար նստել և ուշադրութեամբ հետևել թէ ինչպէս նկարող հասակաւորի մատիտի տակից դուրս են գալիս իրեն ծանօթ իրերը, կենդանիներն և մարդիկ:

Այսպէս ուրեմն, նկարելու սէրը յատուկ է երեխաներին, և մեր նպատակը պէտք է լինի որ կանոնաւոր կերպով զարգացնենք այդ սէրը, ոչ թէ խեղդենք նրա մէջ: Մինչդեռ ծնողներից շատերին այնքան էլ դուր չի գալիս երեխաների այդ յափշտակելը նրկարչութեամբ: Նրանց համար անախորժ է տեսնել մանկական մատիտի այդ անվերջ հետքերը լրագիրների և ամսագիրների լուսանցքների վրա, զրքերի կազմերի, պատերի պաստառի վրա և այլն: Բայց մեղքը այստեղ

ոչ թէ երեխայինն է, այլ նրան շրջապատող հասակա-
 ւորներինը: Ինչո՞ւ ժամանակին չեն տալիս նրան ան-
 հրաժեշտ պիտոյքները: Եթէ նա իր ձեռքի տակ ունե-
 նալիս լինէր քարետախտակ ու քարեզրիչ կամ թուղթ,
 նրա մատիտը չէր թափառի այս ու այն տեղ:

Հասակավորների գործը պիտի լինի — մի ելք
 ու կանոնաւոր ընթացք տալ մանկական բնական
 ձգտումին դէպի գործունէութիւնն ու ստեղծա-
 գործութիւնը: Երեխաներից ամենամանտանելիներն
 և ամենաանբախտները նրանք են, որոնք ունենում են
 գործունէութեան մի սաստիկ զարգացած պահանջ,
 իսկ զրկւած են լինում հասակավորների խելացի հա-
 մակրանքից և օգնութիւնից: Երեխան միշտ կամենում
 է ինքը մի բան շինել, բայց ինքը միշտ չի իմանում
 թէ ինչ, և էլ միշտ ձեռքի տակ չի ունենում հարկա-
 ւոր պարագաները: Նա ձանձրանում է, չը գիտէ թէ
 ինչ անի, ինչով զբաղւի, և սկսում է շարութիւն անել
 կամ մեծերի գլուխը տանել: Այդպիսի դէպքերում նը-
 կարչութիւնը հիանալի փրկութիւն է: Ուրիշ զբաղմունք-
 ների համար հասակավորն էլ այդ բոլորին կարող է
 ժամանակ կամ հարկաւոր պարագաները չունենալ,
 բայց թուղթ և մատիտ միշտ տանը կը գտնուի:

Թուղթ ու մատիտ տալով ի հարկէ դեռ ամեն
 բան չի վերջանում. պէտք է ցոյց տալ երեխային թէ
 ինչպէս պիտի բռնի մատիտը, պէտք է ղեկավար
 լինել, երբ փորձեր է անում այս կամ այն ինչ բանը
 նկարելու: Սկսեցէք ամենապարզ նկարներից և անցէք
 աւելի բարդերին: Դրա համար հասակավորներից ըս-

կղրում չի պահանջում առանձին շնորհք: Երեխան
 նոյնիսկ աւելի յաջախ գոհ է լինում ամենակոպիտ,
 նախնական նկարով, իր երեակայութեամբ լրացնելով
 նրա պակասները, և ընդհակառակը՝ հասակավորի նը-
 կարած շատ կատարեալ, շատ բարձր պատկերը կարող
 է ամենաչնչին արժէք ունենալ երեխայի աչքում, որը
 չի կարողանում ոչ նկարչութեան նրբութիւնը հաս-
 կանալ, ոչ էլ ինքը նմանեցնել այդպիսի նկարին: Իսկ
 տեսէք թէ ինչպէս նա հրճուում է և ինքն ի աշխա-
 տում է նոյնպէս նկարել, երբ տեսնում է, ինչպէս
 հասակավորը մի քանի տարրական գծերով նկարում է
 «ուրախ էջ» կամ «տխուր էջ», մի քանի շրջաններով և
 մի քանի գծերով ու ստորակէտով՝ «կատու», ուղղա-
 հայեաց գծով և մի քանի թեքերով՝ «ծառ» և այլն:

Ինչից պէտք է սկսել: Ի՞նչ պէտք է նախ և ա-
 ռաջ նկարի մանուկը: Ի՞ հարկէ, իրեն շրջապատող,
 մօտիկ և ծանօթ իրերը — սեղան, աթոռ, մահճակալ,
 ձի, կատու, տուն, ծառ, օգտւելով դրա համար ամե-
 նապարզ գծերով: Սկզբում կարելի է նկատել ամեն իր
 առանձին առանձին, յետոյ միացնել նրանց, կազմելով
 մի պատկեր, մի տեսարան: Նկարը շատ աւելի արժէ-
 քաւոր է դառնում, եթէ նկարելիս մարդ նաև բացատը-
 րում է. «Այ արի դեռ տուն նկարեհնք: Այստեղ մի փայտ
 կը դնենք, այստեղ էլ — սրանք պատեր են, տակից էլ
 կը միացնենք — սա էլ կը լինի յատակը, վերևից էլ կը
 միացնենք — այս էլ առաստաղը: Իսկ այս թեք գծերն
 ապա ինչ են, այս էլ տանիքն է: Հիմա պատուհաննե-
 րը շինենք: ... Քանի հատ անենք... Հիմա էլ դուռն ու

պատշգամբը: Հինգ հատ աստիճան: Ահա տունը պատ-
րաստ է... Իսկ ծխանն ուր է: Չէ, ծխանն էլ պէտք է
անդը դնենք: Իսկ նրա միջից թող ծուխ դուրս գայ—
այ ուր, ուր... Այս էլ մայրիկը բեզ համար փլաւ է
եփում»:...

Որպէս զի նկարելու գործը հեշտացրած լինենք,
աւելի լաւ է տանք նրան մաքուր թուղթ կամ քարե-
տախտակ: Քարետախտակի վրա նկարելիս, երեխան
կարող է աւելի հեշտութեամբ ուղղել իր սխալները, և
նկարել նա կարող է ինչքան ուզենայ—կը ջնջի ու հա
կը նկարի:—Իսկ թուղթը ընտելացնում է զգուշութեան
և ճշտագանութեան: Սկզբում լաւ է վերցնել հասա-
րակ, սև, ոչ շատ փափուկ, ոչ էլ շատ ամուր մատիտ
(Ֆաբեր № 2). երբ երեխայի ձեռքը կը վարժւի և նա
կը սովորի հասարակ մատիտով նկարել, կարելի է անց-
նել և գունաւոր մատիտների: Նրանք և աւելի թանկ
են, և աւելի հեշտ են կոտրուում, և աւելի դժւար սըր-
ւում:

Մեծ նշանակութիւն ունի երեխաներին շարու-
նակ վարժեցնել նկարչութեան մէջ և կանոնաւոր անց-
նել աւելի պարզ նկարներից դէպի աւելի բարդերը:
Անհրաժեշտ է որ ձեռքի ճարպկութիւնը, աչքի սրու-
թիւնը և գծեր ու գոյներ միացնելու հմտութիւնը
զարգանան մանկան ընդհանուր հոգեկան զարգացման
հետ զուգընթացաբար: Թէ չէ, եթէ գեղասիրական պա-
հանջներն աւելի առաջ դնան քան թէ նրա սեփական
գիտութիւնն այդ պահանջներին բաւարարութիւն տա-


լու,—նրա սհրտը կարող է կոտրւել, նա կը վհատի և
բուրբոզիւն երեսը կը դարձնի նկարչութիւնից:

Շատ են տիրում երեխաները նա և գննել պատկերա-
զարդ գրքեր: Գրախանութիւնները լինն են այդպիսի գըր-
քերով, բայց ոչ բոլորը կարող ենք յանձնարարել:

Պատկերները պէտք է լաւ, բնութեանը հաւատա-
րիմ, կենսալից, հասկանալի և հետաքրքրական լինն
երեխաների համար: Բնութեան զեղեցիկ տեսարաննե-
րը սովորաբար այնքան չեն հետաքրքրում փոքրիկ
մանուկներին, ինչպէս կենդանիների ու մարդկանց
պատկերները, և այդ աչքի առաջ պէտք է ունենալ
գիրք ընտրելիս: Յետոյ, աւելի լաւ է, եթէ պատկերը
ներկայացնում է երեխային հարազատ կեանքը, եթէ
մարդկանց թէ դէմքերը և թէ շորերը, տունը, ծառերը
նրանց վրա այնպէս են, ինչպէս նա սովորել է տեսնել
է իր շուրջը: Ինչքան էլ լաւ նկարւած լինէին պատկեր-
ները, օրինակ՝ անգլիական գրքերի մէջ, և ինչքան էլ
նրանք դուր գային անգլիացի մանուկներին, մեր մանուկ-
ների սրտին նրանք այնքան շատ բան չեն ասի, ինչքան
որ մեր հարազատ շրջապատը ներկայացնող պատկեր-
ները:

Պատկերը բացատրող բնագիրը պէտք է լինի
պարզ, լիովին մատչելի մանկական հասկացողութեան
համար, բայց առանց կեղծ կերպով յարմարելու ման-
կական բլբլոցին: Մտքուր, գրական լեզուն, առանց
աւելորդ զարդարանքների ու բլբլոցների, խելացի և
մանուկների զարգացմանը համապատասխան բովան-
դակութիւն — ահա այն բանն է, որ մանկները, որոնց

1903
7957-52 (4803)



պիտի բաւարարութիւն տայ այդ տեսակ գրականութիւնը:

Մեր հրատարակիչները առաջ չափազանց շատ էին օգտուում օտարազգի գրքոյկներէց, վերջնելով այնտեղից գլխաւորապէս պատկերները, իսկ նրանց բնագիրը կազմել տալով տանու գրողներին: Եւ քանի՛ քանի՛ տափակ, անմիտ գրքեր էին անցնում այն ժամանակ երեխաների ձեռքերը, երբեմն նաև անճոռնի ոտանաւորներով: Այժմ նկատուում է փոփոխութիւն զէպիլաւը: Լոյս են տեսել բազմաթիւ գրքեր, որոնք պատկերազարդած են մեր (Նորվեգիայի) հայրենի, տաղանդաւոր նկարիչների ձեռքով և ունեն մի այնպիսի բովանդակութիւն, որ բաւարարութիւն է տալիս աւոզջ բանականութեան և գրական գեղարուեստական ճաշակի պահանջներին:

Ի վերջոյ բերում ենք մի հասարակ միջոց գեղեցիկ պատկերների հարուստ հաւաքածու կազմելու, թէ փոքրիկ մանուկների և թէ աւելի չափահասների համար: Տարւոյ ընթացքում ամեն մի ընտանիք ստանում է բազմաթիւ պատկերազարդ հրատէրներ կամ յայտարարութիւններ, որ սովորաբար կարգալուց յետոյ մեծերը զամբիւղն են նետում: Օգնեցէք երեխաներին որ հաւաքեն այդտեսակ թերթերն ու կտրեն պատկերները կամ բաց նամակները, աւէջ նրանց մի քանի թերթ հաստ թղթից, և թող երեխաները կպցնեն գրանց վրա դուրս կտրած պատկերները: Մի փոքր ժամանակից յետոյ կարող է ստացել մի այնպիսի հարուստ հաւաքածու, որ ինքներդ էլ զարմանաք: Հէնց

այդ ժողովածուի հաւաքելը մի շատ օգտաւէտ և աժան զբաղմունք ու զւարճութիւն է և կարող է ուրախութեան մի նոր աղբիւր լինել երեխաների համար:

Մանուկների համար պատմիկ և բարձր ձայնով կարգալը

Մանուկներին հեքիաթ պատմելու արւեստը աւելի կամ պակաս յայտնի է ամեն հօրն ու մօրը: Բոլորըն էլ զիտեն համապատասխան պատմութիւններ, յիշում են թէ ինչ են իրենց պատմել մանկութեան ժամանակ, և պատմելու շնորքը ինքն իրան է գալիս: Ոչ ոք չի սկսի՝ պատմելով հարազատ զաւակներին այս կամ այն բան, գործածել արւեստական լեզու, գրական ընտիր դարձւածքներ կամ պաշտօնակար ոճ: Նոյն իսկ այն մարդը, որ իր մտքերը գրաւոր արտայայտելիս անկարող կը լինէր ազատել իւրացրած գրական կամ պաշտօնական ոճից, իր մանուկների հետ խօսելիս սովորաբար գտնում է ամենապարզ, ընական դարձւածքներ, երբեմն նոյնիսկ այնքան պարզ, հասարակ ոճեր, որ եթէ մի ուրիշ անգամ մէկը նրան վերագրէր այդ ոճերը, նա կատէր թէ ինքը չի դործածել այդպիսի գուհիկ, իրեն անյատուկ բառեր: Ես գտնէ յիշում եմ որ քանիցս անգամ այդպէս պատահել է հօրս հետ: Ես կրկնել եմ խօսակցութեան ժամանակ որևէ դարձւածք, որ նա գործածած է եղել ժամանակ որևէ դարձւածք, որ նա գործածած է եղել անդիտակցաբար մեզ հետ ուրախ զրուցելիս, նա ուղղել է ինձ, իսկ ես պատասխանել եմ որ ինքն էլ է

այդպէս խօսում, ու նա չի կամեցել հաւատալ, յամա-
նութեամբ հերքել է:

Երեխաների հետ անպայման պէտք է խօսել հա-
սարակ լեզուով: Նրանք գեռ չեն կարողացել իւրացնել
բարդ դարձւածքներ և ոճեր: Առհասարակ, ինչպէս
մանուկներին մարմնական կերակուրը պիտի հասարակ
լինի,—պղպեղ, մանանիխ և շատ այլ կամ շատ շաքար
չը պարունակի,—պարզ, սովորական խորտիկներ լի-
նեն, այնպէս էլ հոգեկանը: Պէտք է պատմելիս նոյն-
պէս խոյս տալ չափազանց մռայլ, տխուր բաներից:
«Կարմիր գլխարկի» պատմութիւնը, իմ կարծիքով,
պէտք է հէնց ցոյց տայ այն սահմանը, որից չը պէտք
է անցնել: Լաւ չէ և սարսափելի բաներ պատմել:
Ամենից լաւ և մատչելի նիւթն է երեխաների համար
ծիճադաշարժը: Բայց քանի որ նրանց երեւակայութիւ-
նը շատ վաղ է զարթնում և սնունդ է խնդրում, պէտք
այս մանկական պահանջին էլ բաւարարութիւն տալ,
պատմութիւններից չը ջնջելով հրաշալի տարրը: Ամե-
նից առողջ և հաճելի սնունդը մանկական երեւակայու-
թեանը կարող են տալ մեր ժողովրդական հե-
քիաթները: Նրանց մէջ անսպառ աղբիւր կայ հրաշա-
լի պատկերների, առողջ յեղնութեան, թարմ մտքերի
և խոր բարոյականութեան, և մանուկը անձնատուր է
լինում տպաւորութեանը ամբողջ հոգով: Նա միշտ ըն-
դունակ չի լինում թափանցել այլաբանութեան խոր-
քը, հեքիաթի կեղևի տակ ծածկւած մտքի ուղն ու
ծուծը, բայց այն էլ լաւ է, որ նա կը սիրի այդ կե-
ղևը, կապրի մայրենի հեքիաթով: Հեքիաթի միջոցով

նրա մէջ կապ կառաջանայ մայրենի բանաստեղծու-
թեան, մայրենի հնութեան, մայրենի ժողովրդական
նիստ ու կացի հետ, և այդ կապը հետզհետէ միայն
կաճի ու կամրապնդւի, քանի աւելի կաճի ու կը զար-
դանայ մանուկը:

Հեքիաթներից յետոյ գուցէ մի աւելի յարմար նիւթ
չը կայ երեխաներին պատմելու համար, քան թէ հօր ու
մօր յիշողութիւններն են իրենց մանկական կեանքից:
Երեխաները պատրաստ են անվերջ լսելու ծնողների
պատմածները իրենց անցեալի կամ հայրերից, մայրե-
րից, պապերից, տատերից լսածների մասին: Իսկ
ծնողները՝ իրենց ընտանեկան պատմութիւնից նիւթեր
առնելով, ոչ թէ միայն զբաղեցնում են երեխանե-
րին, այլ և կըթում են նրանց: Այդ յիշողութիւնները՝
օգնելով երեխաներին հասկանալու հայրերի և պապե-
րի կեանքը, ամենից լաւ ամրապնդում են այն թան-
կագին կապերը, որոնք շողկապում են նախնիներին
իրենց յետնորդների հետ: Ստիպելով երեխաներին
անգիտակցօրէն ներշնչել լաւագոյն ընտանեկան ա-
ւանդութիւններով, այդ պատմութիւնները լրջօրէն
մտածել են տալիս նրանց այն պատասխանատու-
թեան մասին, որ մարդուս վրա դնում է ծագումը, և
ցանկութիւն են տրճարծում նրանց մէջ արժանի լի-
նելու իրենց նախնիներին: Այդ պատմութիւնների մէջ
պահպանւած որևէ փոքրիկ սրտաշարժ կամ ազնիւ
գիծ նախնիների կեանքից՝ կարող է հանդիսանալ մի
տեսակ սերմ, որ՝ ընկնելով մանկան հոգու մէջ, կա-
րող է ծիլեր արձակել յօգուտ նրա և ուրիշների: Ըն-

տանեկան լաւ աւանդութիւնները մեծ առաւելութիւն են ընտանեկան կրթութեան գործում:

Միևնույն պատճառներով օգտուէտ է որ երեխաները ազնուօրէն դնեն մեծերի պատմածներին հնից և նորից: Այդ զրոյցները երբեմն շատ աւելի բան են տալիս, քան թէ դասերը, և էլ զարմանալի հեշտ են իւրացում մանկան կողմից ու միայն զւարճութիւն են նրան պատճառում: Իմ լաւագոյն մանկական յիշողութիւններից մի քանիսը կապւած են հէնց այդպիսի կենսաբուշխ պատկերների հետ, որ իմ աչքիս առջև բացւել են իմ ծնողների և ուրիշ՝ ինձ շրջապատող հասակաւորների խօսակցութեան ժամանակ: Այդ խօսակցութիւնները մեզ, երեխաներիս համար ոչ պակաս հետաքրքրական և օգտակար էին, քան թէ յատկապէս մեզ համար նշանակւած պատմութիւնները:

Սօսելով մանուկների համար պատմելու մասին, չեմ կարող չը յիշատակել այստեղ և մանուկների համար երգելու մասին:

Երգելը երկու լաւ կողմ ունի. նախ՝ նա մանուկներին պատճառում է հաճելի, հոգին զւարթացնող զւարճութիւն, և ապա զարգացնում է նրանց մէջ նազայնութիւն: Պատահում է որ հայրն ու մայրը մոռացած են լինում մանկութեան ժամանակ լսած հեքիաթները, բայց եթէ նրանք իմանում են երգել, շատ սակաւ է լինում, որ մանկութեան ժամանակ երգած երգերի բառերը նրանց մտքից ընկած լինեն: Սերունդից սերունդ անցնող այդ երգերն ու եղանակները մի թանգագին աւանդ են: Յաճախ մօր բերա-

նից լսած մի որեւէ պարզ երգ այնպէս խորն է թափանցում մանկան հոգու մէջ, ամենանուրբ լարերը հնչեցնելով այնտեղ, որ շատ տարիներ յետոյ, արդէն հասակաւոր մարդ դառնալով, նա, լոկելով յանկարծ նոյն եղանակը, նորից մանուկ է դառնում հոգով, նորից սիրտը բացւում է ամենաքնքուշ, մեղմ զգացմունքների համար:

Բացի վերև յիշած նիւթերից՝ ծնողներից մեծ մասը հազիւ թէ ունենայ պատմելու բան: Այն ժամանակ մնում է որ դիմեն ընթերցանութեանը: Եւ ահա մենք հասանք նեղ, ընտանեկան շրջանում ահազին նշանակութիւն ունեցող գործին: Բարձր ձայնով կարդալուն նւիրւած ժամերը, եթէ ընթերցանութիւնը կանոնաւոր է տարւում, ընտանիքի բոլոր անդամների պատճառում են ամենալաւ, որչափ ախորժելի, նոյնչափ և օգտուէտ ժամանց:

Բարձր ձայնով կարդալու արեւստի մասին տարբեր են դատում. մի քանիսը այսինչ պահանջներ են դնում, միւսները՝ այն ինչ: Մեր պրօֆէսիօնալ կարգացողների մեծ մասը—գերաստմներ են, և իմ կարծիքով՝ բոլորն էլ մի պակասութիւն ունեն, այն է, որ ընթերցանութեան հետ շաղկապում են գերաստանական «խաղը», ոչ թէ միայն կարդում են, այլ և որոշ չափով «խաղում»: Ինձ թւում է որ շատ աւելի լաւ տպաւորութիւն է գործում հասարակ, անարեւստ ընթերցանութիւնը, առանց միմիկայի ե գերաստանական շեշտումների, պարզ և արտայայտիչ արտասանութեամբ, որ ապացոյց է ընթերցւածի լիակատար հաս-

կացողութեան: Քանի աւելի է ընթերցանութիւնը յիշեցնում սովորական, պարզ, անկեղծ, կարծես սրտից բղխող պատմութիւնը, այնքան աւելի մեծ տպաւորութիւն է նա թողնում, մանաւանդ երեխաների վրա:

Այնուհետև, բարձր ձայնով երեխաներին կարդալիս անհրաժեշտ է այլ ևս մի պայման աչքի առաջ ունենալ,—որ հեղինակի լեզուն համապատասխան լինի ունկնդիրների հասակին: Ի հարկէ, մանկական գրականութիւնը ունի զանազան ստորաբաժանումներ ըստ հասակների. կան գրքեր և ամսագիրներ յատկապէս աւելի փոքր հասակի, և գրքեր՝ միջին ու մեծ հասակի մանուկների համար: Բայց էլ չենք ասում, որ ոչ բոլոր գրքերի և առանձին հեղինակութիւնների լեզուն լիովին մինչև վերջը «պահպանւած», որոշ հասակին յարմարեցրած է լինում,—պատահում է նաև, որ ընտրութիւն չեղած զէպըում կամ գրքի չափազանց հետաքրքրական լինելու պատճառով ծնողները ստիպւած են լինում վերցնելն բարձրաձայն կարդալու համար այնպիսի մի գրւածք, որի լեզուն ընդհանրապէս կամ տեղ տեղ շատ խրթին և անհասկանալի է այս ինչ հասակի մանուկների համար: Վերջապէս չէ՞ որ մանկական գրականութեան մէջ կայ մի ամբողջ ճիւղ թարգմանական գրւածքների, որտեղ գտնում ենք ինքն ըստ ինքեան գեղեցիկ, բայց ոչ բոլորովին աջող կերպով թարգմանւած բաներ, երբեմն ծանր և անճոռնի ոճով և թարգմանած գրւածքներ, բոլոր այսպիսի զէպքերում բարձրաձայն ընթերցանութիւնը պիտի դառնայ մասամբ և փոխադրութիւն,—անյարմար,

չափազանց դժւար ըմբռնելի, չափազանց դրական կամ օտարազգի դարձւածքները պէտք է փոխարինել աւելի հասարակ, պարզ, առօրեայ, սովորական խօսակցութիւնից վերցրած, երեխաներին բոլորովին հասկանալի բառերով: Սակայն զխաւորապէս, ի հարկէ, պէտք է օգուտ քաղել մայրենի գրականութեան այնպիսի երկերից, որոնց լեզուն օրինակելի է: Քանի աւելի փոքր են մանուկները, այնքան աւելի կարևոր է որ լսեն մաքուր, կանոնաւոր «գասական» մայրենի լեզու. թող կրթւեն այդ լեզով, թող իրենց ամենամատաղ տարիքից ներշնչւեն մայրենի լեզւի ոգով, իւրացնեն մայրենի լեզւի կանոնաւոր և բնորոշ ոճերը: Աւելի մեծ հասակում երգէն այդքան էլ հեշտ չէ «փչացնել լեզուն»:

Ընդհանուր առմամբ, բարձրաձայն ընթերցանութիւնը մէկն է այն լաւագոյն կրթական-դաստիարակչական միջոցներից, որ ունեն ծնողները իրենց ձեռքում:

Երգեցողութիւնը

Ծնողներ, սովորեցրէք ձեր զաւակներին երգել: Աշխատեցէք արծարծել և զարգացնել ձեր երեխայի մէջ երգելու սէրը—զրա մէջ դուք կը գտնէք մի աւելորդ միջոց ազդելու մանկական հոգու վրա և նրան կրթելու:

Քիսաւոր գերը այստեղ՝ պարզ է որ պատկանում է մօրը: Նրա ձայնը դուրս է քաշում մանկան կոկորդից առաջին երաժշտական հնչիւնները: Հարկ էլ չի

լինում առանձնապէս զրդիկ մայրերին այդ անելու,—
ինքը բնազդն է նրանց զրդում:

Ամեն տղամարդ կեանքում գոնէ մէկ անգամ
գառնում է բանաստեղծ,—սիրոյ ժամանակ, երբ երա-
զում է իր սիրած աղջկայ մասին. ամեն կին կեան-
քում գոնէ մէկ անգամ դառնում է երգչուհի—մայ-
րութան ժամանակ, մանկան օրօրոցի գլխին նստած:

Մայրը շատ վաղ է սկսում երգել իր երեխայի
համար, գրեթէ նրա կեանքի առաջին օրից: Սկզբում
շատ կամացուկ, հազիւ լսելի, երկչոտ ձայնով, յետոյ
հետզհետէ աւելի բարձր, աւելի վստահ, քանի աւելի
է նկատում թէ ինչպէս երգը հանդարտեցնում է երե-
խային: Առանձին, անշատ խօսքերը կամաց կամաց
շարահիւսում կազմում են իսկական մի մեղեդի, նրա
հետ կապում են բառեր, և անա պատրաստ է լինում
օրօրոցի երգը, որը յետոյ ամեն օր երգում է, թէ
խաղաղ ուրախութեան և թէ ծանր վշտի ժամերին, և
արմատ է բռնում մանկան գիտակցութեան մէջ և
դառնում է նրա կեանքի արշալոյսի առաջին պայծառ
տպաւորութիւններից մէկը:

Այս ճանապարհով է երևի կազմել օրօրոցի եր-
գերից մեծ մասը: «Երգը ինքն ըստ ինքեան է երգ-
ւում»: Իսկ յետոյ նրանք անցել են բերանէ բերան,
հնչելով և աղքատի խրճիթում, և հարուստի պալա-
տում:

Այդ երգերը ծնւել են ժողովրդի մէջ, ինչպէս ե-
րևում է նրանց զուտ ժողովրդական բնաւորութիւնից:

Մեր ժողովրդի գլխաւոր յատկանիշը—մեղմ թախիծը
—զրոշմել է տխուր-ողբացող եղանակի մէջ, իսկ
մայրական ջինջ ուրախութիւնը՝ կատակ-կայտառ խօս-
քերի մէջ: Այդ բառերը մեծ մասամբ ասում են հայրե-
նի կենսական պայմանների մասին, նկարագրում են
միշտ հայրենի, ծանօթ պատկերներն և դէմքերը. սը-
րանք այդ միջոցով հարազատ և մօտիկ են դառնում
մանկան սրտին, առաջացնելով նրա մէջ համապա-
տասխան հասկացողութիւններ:

Զուտ գեղասիրական տեսակէտից այդ երգերը չի
կարելի շատ բարձր դասել: Եղանակը միակերպ է լի-
նում, և ըովանդակութիւնը՝ աղքատիկ: Իսկ եթէ չը
նայելով այդ բանին, այդ երգերը այդ աստիճան շատ
տարածւած են և այդչափ սիրելի են նոյն իսկ կըր-
թւած դասակարգի մէջ,—պատճառն այն է, որ նրանք
ունեն ինքնուրոյն բանաստեղծականութիւն և զուտ
մանկական թարմութիւն և պարզամտութիւն, որ
այնքան դուր են գալիս թէ մանուկներին և թէ հա-
սակաւորներին: Բայց ի հարկէ մայրերը լաւ կանեն,
որ օգտւեն այն օրօրոցի երգերից, որոնք մեծ ուշա-
դրութեան արժանի են և գրական, և երաժշտական տե-
սակէտից: Մեր (Նորվեգիայի) բանաստեղծներն ու
նւագաստեղծները տւել են մի բանի իսկ որ գեղեցիկ
նմուշներ, որ ամեն մայր պիտի անպատճառ գիտե-
նայ:

Բայց ժամանակը գնում է: Եւ մի երջանիկ օր
մայրը նկատում է որ երեխան աշխատում է կրկնել

ծանօթ եղանակը: Մայրը լարած ուշադրութեամբ ա-
կանջ է դնում թոյլ, անորոշ հնչիւններին, որոնք հետզ-
հետէ ուժեղանում են և դառնում են իսկական երգե-
ցողութիւն:

Երեք տարեկանից մինչև դպրոց մտնելու ժամա-
նակը շատ նշանաւոր շրջան է երեխայի կեանքում.
այդ շրջանումն է հիմք դրւում թէ ընտելութեան և
թէ անբողջ մտաւոր և բարոյական զարգացման: Ուս-
տի՝ մանկական երգեցողութեանը պէտք է առաջնա-
կարգ տեղ տալ այդ ժամանակում, որպէս բարեբար
միջոցներից մէկին մանկան հոգին զարգացնելու հա-
մար: Ծնողները առանձին առիթներ են ունենում ու-
շադրութիւն դարձնելու եւ հնչիւնների կազմութեան,
եւ արտասանութեան, եւ շնչելու, խօսելու, երգելու և
իրանը պահելու ձևի վրա, նոյնպէս և ձայնական գոր-
ծարանները վարժեցնելու վրա և այլն: Առհասարակ
երաժշտասէր ծնողների համար դժւար չէ զարգացնել
երեխայի մէջ երգելու ընդունակութիւնը. եթէ երե-
խան ձայն և լսողութիւն ունի, գործը ինքն ըստ ինքեան
առաջ է գնում, բայց ի հարկէ ամենից հեշտ երե-
խան այդ արւեստը իւրացնում է մօր երգածին ականջ
դնելով:

Այդ ժամանակից մայրը երգում է ոչ թէ մանկան
համար, այլ և նրա հետ, և շուտով մանկան բերանից
սկսում են հնչել նա և ինքնաբերաբար մէկը միւսի ետեից
քաղցր, թարմ երգեր, որ այնպէս զարդարում են ա-
մեն խաղ:

Քանի աւելի ժամանակ կանցնի, այնքան աւելի

երեխան կը սիրի երգեցողութիւնը, կերպի սրտանց,
մի եղանակ միւսի ետեից կը տպաւորեն նրա յիշ-
ողութեան մէջ և կը վերածնեն նրա շրթունքներում:
Պէտք է միայն ընտրել համապատասխան երգեր, աչ-
քի առաջ ունենալով մանկան գեղասիրական-երաժշ-
տական ճաշակի զարգացումը և նրա ձայնի կարողու-
թիւնն ու առհասարակ երաժշտական ընդունակու-
թիւնները: Երգելու ժամանակ պէտք է ուշիուշով հե-
տևել մանկան շնչառութեան, արտասանութեան և շեշ-
տադրութեան, անմիջապէս ուղղելով և վերացնելով
զանազան անկանոնութիւններն ու սխալները:

Երգը միայն այն ժամանակն է հարկաւոր տպա-
ւորութիւնը անում, երբ բառերն ու եղանակը իրար
բոլորովին համապատասխան ու յարմար են լինում:
Եւ երեխաների ուշադրութիւնը դարձնելով այդ կա-
պակցութեան վրա՝ ծնողները զարգացնում և ազնու-
ցնում են նրանց զգազմունքներն ու ճաշակը: Իսկ բը-
նագրի ու եղանակի գեղեցկութիւնը մանուկներին
պարզաբանելու լաւագոյն միջոցն այն է, որ ծնողները
իրենք երգեն, հաւաքելով իրենց շուրջը իրենց զաւակ-
ներին: Երեխաներին երգեր սովորեցնելուն, նրանց
հետ միասին երգելուն նւիրւած ժամերը—ամենապայ-
ծառ և ամենաարդիւնաւէտ ժամերիցն են փոքրիկների
համար:

Անցնում է առաջին անհոգ մանկութիւնը: Դա-
լիս են դպրոցական տարիները: Դպրոցում մանուկը
նորից հանդիպում է երգին, բայց արդէն ուրիշ պայ-

մանները մէջ. նա աշակերտ է, երգեցողութիւնը դասարանական առարկայ է: Դպրոցական երգեցողութիւնը աւելի զանազանակերպ և բովանդակալից է, քան ընտանեկանը, բայց դրա փոխարէն պահանջներն էլ աւելի խիստ են. դա արդէն ոչ միայն հաճելի և օգտաւէտ ժամանց է, այլ ինքնուրոյն գիտակցական աշխատանք:

Ուրեմն՝ տարբեր ձևեր, տարբեր միջոցներ, մի փոքր տարբեր նպատակ:

Նոր պայմաններից առաջացած լարումն ու ստիպողականութիւնը կարող են բացասական ներգործութիւն ունենալ մանկան վրա. Ուստի պէտք է կարելւոյն չափ հեշտացնել, թեթևացնել նրա համար՝ թուշնակի երգի նման ազատ, անկաշկանդ երգեցողութիւնից դէպի որոշ ժամերին, որոշ կանոններով երգելուն անցնելը, որպէսզի երեխայի սէրը դէպի երգեցողութիւնը առհասարակ չը թուլանայ: Հէնց որ այդ անցնելը տեղի է ունեցել առանց խոչընդոտների, երեխայի առջև բացուում է նոր, աւելի ընդարձակ ասպարէզ, որ և ոգևորում է նրան:

Ահա այդտեղ է որ շատ կարևոր է ընտանիքի աշակցութիւնը: Դպրոցում սովորած երգերը երեխան բերում է տուն, — դիմաւորեցէք ինչպէս հարկն է, լիակատար հետաքրքրութեամբ և համակրանքով. միայն այդ ժամանակ երեխան ինքն էլ կը սովորի գնահատել և սիրել այդ երգերը: Ընտանիքը պէտք է նաև օգնի մանկան իւրացնել դպրոցում երգած եղանակները:

Ուստի միք մտտանալ առաջւայ պէս յաճախ հաւաքել ազատ ժամերին և խմբովին երգել:

Ստորին դասարաններում աշակերտները աւելի հեշտ իւրացնում են որևէ խաղի հետ շաղկապւած երգերը: Այդ տարիքում մտնուկները առանձնապէս սիրում են երգել խաղալով, մանաւանդ աղջիկները: Ափսոս որ տարածւած եղանակներից և բառերից շատերը զուրկ են գեղարւեստական արժանաւորութիւնից: Այս դէպքում ընտանիքն ու դպրոցը պիտի որ ձեռք ձեռքի տւած գնային, նորոգէին և հարստացնէին այդ խաղախառն երգերի ռեպերուարը:

Երգեցողութեան դասերին դպրոցում երեխաները ծանօթանում են բազմաթիւ եղանակների և ոտանաւորների հետ, և լուրջ, և ուրախ, և թեթև, և ծանր, և տօնական, և ժողովրդական եւ այլ երգերի հետ: Իրենց առանձին կարևորութեան և վսեմ բնաւորութեան շնորհիւ օրհներգները առանձին տեղն են բռնում: Դրանցից յետոյ գալիս են ազգասիրական և ժողովրդական երգերը, որոնց միջից բուրում են հայրենասիրութիւնն, ազգային հպարտութիւնն ու բնութեան գեղեցկութիւնների հրապուրանքը: Այդ տեսակ երգերի հետ պէտք է ծանօթացնել երեխային որքան կարելի է շուտով. նրանք կարող են նպաստել ջերմ հայրենասիրութեան և ազգային հպարտութեան զգացմունքի զարգանալուն և ամրապնդելուն փոքրիկների մէջ:

Միջին դասարաններում երգեցողութեան դասա-

տուութեանը շատ է օժանդակում հոտաների գիտութիւնը: Նօտաները միակ միջոցն են երգեցողութեան մէջ ինքնուրունութեանը հասնելու: Ի հարկէ, ուղղակի նօտաներին նայելով ամեն նոր, անծանօթ երգ երգելը—գուցէ ամենքի համար այնքան էլ հեշտ չը լինի. դրա համար պէտք է առանձին ընդունակութիւններ ունենալ. բայց քանի աւելի է մօտենում մանուկը այդ ցանկալի նպատակին, որ աչքի առաջ ունի դպրոցական երգեցողութիւն, այնքան աւելի լաւ:

Առհասարակ նօտաներ կարգաւ և նօտաներով երգել սովորել մի շատ էլ դժւար բան չէ: Կը պատմեմ, օրինակ, թէ ինչպէս ես ինքս այդ արւեստին հասայ: Ես մեծացել եմ մի ընտանիքում, որտեղ ամենքը—մեծից մինչև փոքրը—շարունակ երգում էին, ես էլ միւսների հետ, բայց նօտաների հետ ես չը կարողացայ ծանօթանալ մինչև 14 տարեկան հասակս: Միայն այդ հասակում ես առաջին անգամ ձեռքս առայ նօտաների տետրը, դտայ նրա մէջ ինձ ծանօթ մի երգ և սկսեցի երգել, միևնոյն ժամանակ հետեւելով ձայնանիշներին: Այդպիսով ես սովորեցի հասկանալ այդ տարօրինակ նշանների նշանակութիւն, զանազանել նրանց ըստ ձայնի տեղութեան և բարձրութեան, չը գիտենալով դեռ նրանց անունները:

Եւ վերջապէս, մանկական մեծ հասակում սկսում է խմբական բազմաձայն երգեցողութիւնը: Նա առանձնապէս դուր է գալիս թէ հասակաւորներին և թէ մանուկներին, օրովհետև այդտեղ համեմատաբար փոքր

միջոցներով կարելի է անել շատ աւելի մեծ տպաւորութիւն, քան թէ միաձայն երգեցողութեան ժամանակ:

Մանկական երգե, կասակներ, սասցւածքներ, կեփաքներ, առակներ եւ հանելուկներ¹

Կայ բանաստեղծութեան մի ինքնօրինակ աշխարհ, մի առանձին գրականութիւն, որ կարելի է անանել մանկական խաղերի գրականութիւն: Այդ գրականութիւնից թանաքի կամ փոշու հոտ չի գալիս: Նա, որպէս և ժողովրդական երաժշտութիւնը, ծագել է ինքն իրան. որտեղ, երբ, ում, ձեռքով,—ոչ ոք չը գիտէ: Տատի և սպալի բերանից նա անցնում է հօր և մօր բերանը, իսկ սրանց բերանից այնուհետև յաջորդ սերունդի բերանը և այլն:

Այդ մանկական գրականութիւնը 4—5 դլխաւոր բաժանմունքներ ունի, որ մօտաւորապէս համապատասխանում են մանկան զարգացման զանազան աստիճաններին: Դեռ այն ժամանակ, երբ երեխան չի իջնում մօր ձեռքից, մայրը երգում է նրա համար երգեր, զւարձացնում է կատակներով և սասցւածքներով. երբ երեխան աւելի մեծանում է, մայրը պատմում է նրան մանր, պարզ հեքիաթներ և առակներ. ապա հերթը հասնում է իսկական հեքիաթներին և, վերջապէս, հանելուկներին:

Առաջին երգերը, կատակներն ու սասցւածքները մի տեսակ իրենք իրենց դուրս են թռչում մօր բերան

նից, երբնա օրօրում է կամ զւարճացնում է մանկան: Բո-
լորն էլ չափազանց պարզ, միամիտ, անպաճոյճ են լի-
նում, բայց սրչափ դուր են գալիս փոքրիկներին: Նը-
րանցից մի քանիսը նկարագրում են մօր և զաւակի
սերտ մտերմական կապը, միւսները ասում են որ մա-
նուկը մի տեսակ կենդրոն է շրջապատող կեանքի, շա-
տերը մի մի պատկեր են՝ քնակարանից հանած, ուր գոր-
ծող անձինք լինում են կենդանիներ, կան այնպիսի-
ները, որտեղ հասարակ, առողջ բարոյական գաղափար
է պարունակում, մի քանիսի մէջ էլ կատակ խաղեր
են մանկան հետ:

Այդ երգերից, կատակներից և ասացածքներից
բուրում է մանկական թարմութիւն, անարւեստակա-
նութիւն և բնութեան սէր, որ երբէմն նոյն իսկ մար-
դացնում է այդ բնութիւնը:

Այդ փոքրիկ պատկերների մէջ շրջապատի տը-
պաւորութիւնները շարահիւսում են, առանց հետեւելու
մտածողութեան որևէ օրէնքին, այլ պարզապէս կող-
քէ կողք, ինչպէս գեանապտուղները ցողունների վրա:
Նրա մէջ չը կան դատողութիւններ առարկաների մա-
սին, նրա մէջ հանդէս են գալիս և ապրում են իրենք
առարկանները, և ամեն բան այնպէս պարզ, բնական
և ճշգրիտ են դուրս բերում: Նրանք պատկերացնում են
խկապէս կեանքը ոչ այնպէս, ինչպէս նա կայ իրօք,
այլ այնպէս, ինչպէս նա անդրադառնում է դեռ ոչ բո-
լորովին հասունացած հոգու մէջ և այն աշխարհում,
որտեղ երեխան զգում է իրան, ինչպէս իր տանը: Եւ
այնուամենայնիւ այդ երգերով, կատակներով, ասաց-

ւածքներով առաջին հիմքն է դրւում երեխայի ծանօ-
թութեանը կեանքի հետ, մանկական աշխարհից դուրս
գտնւած աշխարհի հետ: Ամեն մի երգ, կատակ, աս-
ացւածք ընդլայնում է մանկական աշխարհահայաց-
քը մի քիչ գոնէ: Իսկ նրանց ընդհանուր արդիւնքը
լինում է արդէն բաւականաչափ նշանաւոր մտաւոր
աշխատանք, միայն թէ դրա ընթացքը այնպէս չէ,
ինչպէս հասակաւորներինը՝ տրամաբանական եզրա-
կացութիւններով և կանոններով,—այլ պատկերներն
ու տպաւորութիւնները ըմբռնում են և բացազրոււմ
մանկան ծանօթ կեանքի հետ ունեցած հիմնա-
կան նմանութեամբ, կենդանի աշխարհի հետ ունեցած
ազգակցութեամբ:

Այդ երգերը, կատակները և ասացւածքները նը-
պաստում են նաև մանկան խօսելու ընդունակութեան,
լեզու հասկանալու վրա. նրանք նիւթ են տալիս նրա
հոգուն, աննկատելի կերպով մշակում են հասկացողու-
թիւնները, մի խօսքով, առաջին հիմքն են դնում նրա
խելքի և բնաւորութեան: Նրանք, այսպէս ասած, ման-
կան համար կեանքի առաջին տարիներում հանդիսա-
նում են մի տեսակ բերանացի այրուբէն, առաջին
գասազիրք, իսկ ծնողների և դաստիարակների համար
անգնահատելի և ընդմիշտ թարմ ձեռնարկ, որ օգ-
նում է սերունդէ սերունդ:

Յաջորդ, աւելի բարձր աստիճանի վրա կանգ-
նած են հէքիաթները:

Հէքիաթների գէտ երբեմն լսում են նախազգու-
շացումներ: Այսինքն՝ մեր ժամանակներում հէքիաթի

հակառակորդները այլևս չեն պնդում այն բանի վրա, թէ հեքիաթը սուտ է, որովհետև նրա մէջ չը կայ արտաքին ճշմարտութիւն: Բայց ոչ պակաս միամիտ է և այն առարկութիւնը հեքիաթի դէմ, իբր թէ նրանք ուշացնում են իրականութեան զդացմունքի, բնութեան հասկացողութեան զաքզացումը մանկան մէջ, որովհետև հեքիաթական աշխարհը բոլորովին այն չէ, ինչ որ իրականը: Բայց մի թէ երեխաների վզին փաթաթելով մեծերին յատուկ, հասունացած վերաբերմունքը դէպի շրջապատ կեանքը չի նշանակում, որ երեխայի բնութիւնը բոլորովին մենք չենք հասկանում:

Իսկապէս հեքիաթները պէտք է այն տեսակ հոգեկան սնունդի շարք դասել, ինչպէս են և մանկական երգերը, կատակներն և ասացածքները. այդ սնունդի անպայման պէտք ունի մանուկը իր զարգացման որոշ շրջանում—իրականութեան և հրաշալիքի այդ խառնուրդը հէնց համապատասխանում է մանկան բնական պահանջին, զարգացում և շատացում է նրա հասկացողութեանց պաշարը, անգիտակցօրէն, նա հանաք-հանաք խելը է սովորում այդ գունուէտ պատկերներին: Հեքիաթի մէջ մի բացարձակ բան կայ, որ համապատասխանում է մանկական ձգտմանը դէպի ամբողջական և անմիջականը և լցնում է մանկան հոգին կեանքի ընդհանուր կապի ուժեղ զգացմունքով, բարձրագոյն գորութեան գոյութեան գիտակցութեամբ, գորութեան, որ ի մի է շաղկապում բոլոր, արտաքուստ բաժան-բաժան երևոյթները: Մանուկն ու հեքիաթը կանգնած են մտաւոր կեանքի հաւասար աստիճանին:

Մտածողութեան ընթացքը, եզրափակութեանց ձևը հեքիաթում նոյնն է, ինչ որ մանկան մէջ: Հեքիաթի իսկական աղբիւրն է մանկական հոգին կամ բնութեան զաւակի հոգին, բնութեանը մօտիկ կանգնած մարդու, որ քաղաքակրթութեան առաջին աստիճանների վրա է կանգնած,—ասել է թէ՛ դեռ չը բացւած, չը փթթած հոգին, ուր խելքն ու երևակայութիւնը դեռ չեն կազմել առանձին միութիւններ, այլ գործում են միացած, անբաժան.—մի հոգի, որի մտածողական ընդունակութիւններն ու մանկօրէն թոյլ, անհաստատ, տարտամ են և որը ամեն օր շարունակ զբաղւած է «ինչո՞ւ» և «ինչից է» հարցերով: Մանուկն ու հեքիաթը անբաժան գոյգ են, և Յակոբ Գրիմը բոլորովին իրաւունքի է, կոչելով հեքիաթը «պահապան-հրեշտակ», որ մանկանը ուղեկից է տրւած կեանքի արշալոյսին:

Բայց, ինչպէս որ յաճախ է պատահում կեանքում, հեքիաթի իշար գործածելը բողոքներ է յարուցել հէնց իրեն հեքիաթի դէմ և դրդել է կասկածով վերաբերւել նրա պիտանի լինելուն ընդհանրապէս: Սօսը չը կայ որ անթիւ անհամար հեքիաթներով լցնել մանկան գլուխը լաւ չէ, ինչպէս լաւ է և քաղցր թխածքներ շարունակ տալ հա տալ: Եւ ինչպէս սովորական կերակուրը, այնպէս է հեքիաթը—աւելի լաւ է տնայինը, հարազատը, անարեւտը: Այս հեքիաթը շատ աւելի լաւ կը իւրացնի, քան թէ օտարամուտը, անհարազատը:

Նախ և առաջ պէտք է խոյս տալ օտարն ու հայրենին անխտիր խառնելուց: Միք վախենալ կերակրել երեխային միևնոյն պարզ, անարգար ժողովրդական

հեքիաթով օրէցօր, մինչև որ անգիր կանի և ինքը կը թելադրի ձեզ խօսքերը, եթէ դէմ ընկնէք կամ սովորական ձևով չը պատմէք: Այդպիսի կրկնութիւնը ոչ թէ միայն վարժեցնում է յիշողութիւնը, սրելով նաև հասկացողութիւնը, այլ և պատճառում է երեսային մի յատուկ ուրախութիւն—սպասելու և ճանաչելու առանձնապէս դուր եկող միջնադէպերը: Մի առանձին հրճանք է միշտ առաջացնում միևնոյն խօսքերի կըրկնող շարահիւսութիւնը, որը պատահում է մի քանի ամենապարզ հեքիաթների մէջ:

Իսկ եթէ այնուամենայնիւ երեսային մէջ կը զարգանայ մի առանձին ազահութիւն դէպի հեքիաթներ, կայ մի գեղեցիկ միջոց դրա դէմ—այդ միջոցը ժիժի սնող հեքիաթներն և հեքիաթի յաւելումներն են: Նրանք խաղոյն երեսային փոխադրում են երևակայական աշխարհից իրականը և հրաշալի միջոց են ժամանակին կանգնեցնելու և մի քիչ ախորժակը խլելու հեքիաթամուրացրասէրից: Բայց բաւական չէ չափաւոր լինել հեքիաթ պատմելու մէջ, պէտք է գեռ ևս շոկել և մտղել նրանց: Կան բազմաթիւ հեքիաթներ, որոնք բոլորովին անպէտք են մանուկների համար, և ոչ բոլորն են համապատասխանում նրանց հասակին: Օրինակ, անհրաժեշտ է գզոյշ լինել այնպիսի հեքիաթներ ընտրելիս, որոնք երեսաների մէջ երկիւղ կամ սաստիկ կարեկցութիւն են առաջացնում, ինչպէս են՝ «Կարմիր գըլխարկի» կամ «Վիշապների» հեքիաթները:

Փոքրիկ երեսաների համար յարմարագոյն հեքիաթներն են առհասարակ ժողովրդական հեքիաթները

և մանաւանդ կենդանական վէպը: Մանուկը առանձին հակում ունի դէպի կենդանիները, որոնց կեանքն ու հոգեկան աշխարհը այնպէս պարզ, հասարակ, բնորոշ և հասկանալի են: Դրա համար է որ մանկական երգերը, առակները, կատակները, ասացածքներն ու հեքիաթները իրենց նիւթն առնում են կենդանիների կեանքից: Կենդանիները խօսում, գործում են մարդկանց պէս, բայց և պահպանում են իրենց առաձնայատուկ կենդանական գծերը: Կենդանականի և մարդկայինի այդ խառնուրդն է որ լինելով կենդանական վէպի հիմք, առանձին հրապոյր է ներկայացնում մանկան համար: Ինչպէս երեսան չը հրճւի տեսնելով թէ ինչպէս աղէտը, պահպանելով իր ցեղի իսկական առանձնայատուկութիւնները, — խորամանկութիւնը, նենգութիւնը, սէրը դէպի հաւի կամ վայրի թռչունի միսը, — խօսում է ամենասովորական բաների մասին, հըրաւէր ընդունում և գնում է խնջոյքի կամ հարօտնիքի, քնում է տախտի վրա, պոչը պահում է տախտի տակ, կամ ինչպէս գայլը պոչով ձուկ է որսում գետում և այլն: Այս ամենը հէնց երեսային ճաշակովն ու խելքովն է:

Պէտք է սկսել ամենակարճ, ամենապարզ հեքիաթներից, որոնք ամենից մօտիկ են առաջին երգերին, հանաքներին և ասացածքներին, և հետզհետէ անցնել աւելի երկարներին ու բարդերին:

Չը պէտք է վախենալ բուն ժողովրդական երևակայական հեքիաթից: Ճիշտ է, վերևանց նայողի աչքում նա կերևայ երևակայութեան ամենաազատ, քմահաճ և

կայտառ խաղ, որ տակն ու վրա է անում իրականութեան հանգամանքները: Բայց երեխան բնագոյմամբ ըմբռնում է նրա էութիւնը և ներշնչուում է, ինչպէս վերև ասացինք, կեանքի ընդհանուր կապի սաստիկ զգացմունքով, մարդիկ դառնում են կենդանիներ, կենդանիները մարդ, կենդանի ու բոյսը մարդու կողքին են կանգնում, որպէս նրա հաւատարիմ ընկերներն ու օգնականները: Աւելացրէք սրա վրա նաև պարզութիւնը, ներքին ճշմարտութիւնը և պոսակերների թանձրութիւնը, որոնք, չը նայելով հեքիաթի պարունակած հրաշալի տարրին, գործում են իրականութեան ճնշիչ տպաւորութիւն: Ընդհանուր տրամադրութիւնը այնպէս ուժեղ է լինում, հրաշալին այնպէս խրճուղւած է լինում իրականութեան ամենաթարմ, անմիջական գծերի հետ, որ այդ գծերի ուշադրական ճշմարտութիւնը ձուլւում է իրեն հեքիաթի՝ այնպէս ճշմարիտ երևացող տարրերի հետ և աւելի ևս սաստկացնում է այն տպաւորութիւնը, որ անում է մանկան վրա հեքիաթի գաղափարի ներքին ճշմարտութիւնը:

Հէնց այդ ներքին ճշմարտութիւնն է հեքիաթի գլխաւոր ուժը կազմում: Սրա շնորհիւ է որ հեքիաթը մի տեսակ ընդհանուր սեփականութիւն է հանդիսանում և հաւասարապէս հասկանալի է բոլորի համար: Նա չի ճանաչում տեղի կամ ժամանակի դրած կապանքները: Ասում է միայն «եղել է չի հղել» կամ «մեղնից շատ տարի առաջ»: Գործող անձինք և գործողութեան տեղը մեծ մասամբ յատուկ անուններ չեն ունե-

նում, իսկ եթէ ունենում են էլ, դրանք լինում են ամենասովորական, ամենագործածական կամ թէ գուտ երևակայական մականուններ: («Քօփչու տղայ, Մօթալ, Հանէս, Այծատուր, Եղեգնուհի»):

Իսկական ժողովրդական հեքիաթը արտացոլացնում է մարդկային կեանքը, — ճշմարիտ՝ աւելի շուտ ընդհանուր, հիմնական գծերով, քան թէ ամբողջ մանր մունր զանազանակերպութեամբ, — և ընդգրկում է բոլոր գոսակարգերը, բոլոր բնաւորութիւնները, բոլոր հասակները: Նա հաւասար սիրով խօսում է և թագաւորի ու թագուհու, և քաջ արքայորդու, անվեհեր փահլաւնի, և հասարակ գիւղացու, և խնքուող մոխրատիտիկի, և քահանայի, և գող աւազակի, և աղքատ ու հարուստի, և հայր ու որդու, և մարդ ու կնոջ, և յիմար ու խելօքի, և բարի ու չարի, և գեղեցիկ ու տգեղի մասին: Բայց միայն մարդկային գոյութիւնը չէ որ նա ընդգրկում է: Ոչ մի մեծ կամ փոքր բան չըկայ, որ նա իր պատմածքի մէջ հիւսելիս չը լինի: Հեքիաթի լայն շրջանակի մէջ տեղ են գտնում և գործում են թէ սուրբ նահատակները, թէ սատանաները, թէ վիշապները, թէ ինքը մահը, թէ թոշուները, թէ մեղուները, թէ ամեն տեսակ ճիճուները, և նոյն իսկ անշունչ առարկաները: Բարդ բնաւորութիւններ հեքիաթը չի սիրում, ինչպէս և չի սիրում չափազանց խորիմաստ հանգոյցներ, խճճւած գրութիւններ, կամ նեարգները խիստ լարող միջնադէպեր: Չը նայելով նեարգները խիստ լարող գործողութեան հրաշալի լինելուն, նրա մէջ կատարւող գործողութեան հրաշալի լինելուն, նա կատարւում է սաստիկ պարզ, բնական կերպով:

էսթ

Մենք հէնց սկզբից գիտենք թէ ինչպէս է բանը վերջանալու: Չար, նախանձոտ եղբայրներն և քոյրերը ամօթահար պիտի լինեն, մոխրատիտիկը և հեղ քոյրիկը ստանալու են իրենց պարզասրտութեան և անչարամտութեան վարձը. ճնշւած, հալածւած խորթ աղջիկը ստանալու է աշխարհի ամեն բարութիւն, իսկ երես անձ, ինքնահաւան աղջիկը խիստ պատժւելու է և այլն: Ամենտեղ պարզութիւն, որոշութիւն, ոչ մի չասւած, մութ մնացած, ծուռ բան: Այս է գլխաւորապէս որ հեքիաթը դարձնում է «մանկական» վիպասանութիւն: Նա ինքը՝ մանկական թագաւորութեան բարձունքն է, այն էլ մի այնպիսի թարմացնող, սրբտագբաւ բուրմունք, որ ընդունակ է նորից մանուկ դարձնելու և կրթւած մարդուն, և ծերունուն: Մանկութիւնից ծանօթ և հարազատ հեքիաթը ցոյց է տալիս մեզ կեանքը այնպէս, ինչպէս որ նրան հաւատում է մանուկը, ուր բարին միշտ յաղթանակում է, իսկ չարը յաղթահարւում, ուր խելքն և հեղութիւնը միշտ յաղթում են յիմար մեծամտութեանը, ուր՝ ինչոր լըջօրէն և յամառութեամբ ցանկանում ենք, անպատճառ ձեռք ենք բերում և ուր ոչ մի այնպիսի հրաշալի բան չը կայ, ինչ որ վաղը չը կարողանար իրականութիւն դառնալ:

Չարմանալի չէ որ Լուսերը մէկ անգամ այս կարծիքն է յայտնել. «Ես աշխարհիս ոչ մի բարիքի հետ չէի փոխի այն հեքիաթները, որ լսել եմ մանկութեանս ժամանակ»:

Արդէն այս թուուցիկ բնորոշման մէջ երևան են

գալիս ժողովրդական հեքիաթի մի շարք առանձին գծեր, որոնք անագին նշանակութիւն ունեն մանկան հոգեկան զարգացման համար: Ամենից հեշտն է գուցէ այդ գծերը երեք դասի բաժանել. 1) բարոյական, 2) գեղարւեստական և 3) ազգային—հայրենասիրական նշանակութիւն ունեցող գծեր:

Առաջին դասի գլխաւոր գծերը ես համարում եմ՝ մշտական և ակներև գերադասութիւնը, որ հեքիաթը տալիս է մարդուս ներքին արժանիքներին համեմատած արտաքին, ցուցական կողմերի հետ, և այն նըշանակութիւնը, որ տրւում է, այդ պատճառով, շատ բաներին, ինչ որ ըստ երևոյթեն չուին ու աննշան են. ապա խորին արդարամտութեան զգացմունքը, որ հաւասար, անաչառ կերպով է վերաբերւում ամենքին և ամեն բանին. բնութեան խորին ըմբռնումը, բոլոր արարածների ներքին, կենսական կապի զգացումը և անսերկիւղ, վեհ հեգնութիւնը: Այս ամենի վրա պէտք է աւելացնեմ և այն, որ ամեն բան, ինչ որ իրօք յաւիտական է և առաջացնում է մեր անկեղծ կարեկցութիւնը, ոչ միայն կենդանացնում, արթնացնում է նրանց և թողնում է այնպիսի տպաւորութիւններ, որոնք կը շարունակեն ազդել մարդու վրա և իր ժամանակին գործողութիւններ կը դառնան: Հեքիաթի բարոյական նշանակութեան հետ սերտ կապւած է նրա գեղարւեստական և ազգային հայրենասիրական նշանակութիւնը. այդ բոլոր երեք կողմերը դժար է նոյնիսկ իրարից բաժանել, ժողովրդական հեքիաթի գեղարւեստական

գծերի մէջ նախ և առաջ պէտք է մատնանիշ անել— երևակայութեան հարստութիւնն ու թարմութիւնը, վարպետ արտաքին ձևն ու հրաշալի, ճկուն, արտայայտիչ լեզուն, տիպարների մաքրութիւնն ու պայծառութիւնը, պատմելու եղանակի անկեղծութիւնն ու ամեն տեսակէցիքայի, նախածոածեամբ գաղափարի և չոր ու ցամաք խրատի բացակայութիւնը— խրատը թագնւած է լինում հեքիաթի մէջ, ինչպէս նիւթը պտուղի մէջ:

Հեքիաթի-ազգային-հայրենասիրական նշանակութիւնը կախւած է արդէն վերև բերած երկու տեսակ գծերից շատերից: Առաջին տեղն են բռնում— բնորոշ տիպարները, որ ժողովրդական իրէջաներն են մարմնացնում կամ ազգային ոգու զանազան յատկութիւններն են անձնաւորում. այնուհետև՝ մայրենի բնութեան և բարք ու վարքի պայծառ, կենդանի պատկերները, որոնք երեսխային մօտեցնում են հարազատ իրականութեանը և հող են պատրաստում նրա ապագայ գիտակցական հայրենասիրութեան համար:

Բայց հեքիաթի խորին ազգային— հայրենասիրական նշանակութիւնը այն բանի մէջն է, որ նա դարերի ընթացքում ոգորկել է հազարաւոր պատմողների բերանով, մաղէկ է սերունդէ սերունդ, այնպէս որ ամեն պատահական, անհատական բան նրա միջից գուրս է ընկել և մնացել են միմիայն գլխաւոր, խոշոր գծերը, որոնք բնորոշում են ազգութիւնը: Հեքիաթը մի տեսակ հաւաքական լուսանկարն է ազգի, ազգային պատկերն է, ինչպէս լինում են հաւաքական

ցեղային պատկերներ. մօր, հօր և որդոց լուսանկարները տպագրելով պապի, տատի և այլն լուսանկարների վրա՝ ստանում ենք ընթացնական տիպար, ոչ թէ անհատական դէմք: Այսպէս և ժողովրդական հեքիաթի մէջ առանձին պատմողների գծերը— թէ պատմելու ձևի և թէ իրէջաներին վերաբերելու եղանակի տեսակէտից— ձուլւել են և կազմել են մի տիպիկական դէմք և մշակել է մի ընդհանուր ազգային պատկեր:

Այս կրթական-դաստիարակչական մանկական բանահիւսութեան վերջին յօդը կազմում են հանելուկները: Մրանք աւելի քան նախորդ տեսակները դիմում են մանկան խելքին ու սրամտութեանը, պահանջելով որոշ չափի մտաւոր հասունութիւն և կարծես պատրաստելով նրան անցնելու դպրոցական շրջանին:

Հնում հանելուկները յայտնի չափով բռնում էին դպրոցական վարժութեանց տեղ, մանաւանդ զուտ մշտաւոր դարգացման տեսակէտից: Մեր ծերունիներից շատերը մեծ սիրով յիշում են այն երեկոները, երբ տանեցիք հաւաքւելիս էին լինում ճրագի շուրջը կամ բախարու առջև, ամեն մէկը իր աշխատանքը ձեռքին, և հայրը՝ չիբուկը փշշացնելով, տալիս էր ընտանիքի կրտսեր անդամներին զանազան հանելուկներ և խրթին հարցեր, աշխատելով միևնոյն ժամանակ շփոթեցնել նրանց, խճճել: Իսկ որ մտաւոր մարզանքի դաս էր:

Հանելուկի նպատակն է մտքի մարզանք կամ գիտութեան վերաստուգում: Նիւթը նա առնում է շրջա-

պատող ընուծիւնից և կեանքից և լուծելու համար հետևապէս պահանջուած է սրամտութիւն և երեակա-
յութիւն: Հանելուկի վառ պատկերաւորութիւնը, առար-
կաների կարուկ, հակասութիւններից հիւսւած ընորո-
շութիւնը երեխաների աչքն են բացանում և ցոյց
են տալիս առարկաների շատ և շատ նոր յատկու-
թիւններ, ներկայացնում են նրանց աւելի սաստիկ, աւե-
լի պայծառ կերպով, քան թէ երեխաները սովոր են
տեսնելու: Իսկ այն աշխատանքը, որ հանելուկը տա-
լիս է մտքին, ինքն ըստինքեան այնքան ուրախ, զը-
րաւիչ է, այնքան գրգռուժէ մտաւոր եռանդը, որ հա-
նելուկը անկարելի է չը համարել մի բարենպաստ
գործօն երեխայի առողջ, բազմակողմանի մտաւոր զար-
գացման համար: Երեխայի ուշադրութիւնը մէկ անգա-
մից յափշտակւում է այդ ֆօկուս—մօկուսներով, քծա-
կանների այդ խաղով, ամենասուպասելի զուգադրու-
թիւններով և հրաշալի, իսկ-որ հեքիաթական եզրակա-
ցութիւններով: Հանելուկը զարմանալի յատկութիւն
ունի միացնելու աշխատանքը զարձութեան հետ,
վարժեցնելու բանականութիւնը՝ միաժամանակ վար-
ժեցնելով և երեակայութիւնը, ձուլելու վերացականը
և իրական-շօշափելին, սէալականն ու հրաշալին. նա
հանգիստնում է մի փոքրիկ նմուշ ուսուցման ամենա-
կատարեալ եղանակի—արագ, մէկ անգամից տիրանալ
մանկան ուշադրութեանը, ամուր և վառ կերպով տը-
պաւորել գիտութիւնը նրա յիշողութեան մէջ, սրել
անվորժ հայեացքը և հնարաւորութիւն տալ լիովին
վայելելու աշխատանքի բերկրանքն ու գժւարութեանը

յաղթելու քաղցրութիւնը: Եւ երեխանները առհասա-
րակ ոչ միայն խոյս չեն տալիս այն մտաւոր լարու-
մից, որ պահանջուած է հանելուկի լուծումը, այլ, ընդ-
հակառակը, հագիւ թէ մի ուրիշ մտաւոր զբաղմունքով
այն աստիճան հետաքրքրուած են և սիրում են, քան
թէ հանելուկներն են,—եթէ միայն նրանք հիւսւած են
մանկան ծանօթ կեանքի պայմաններից *): Նախ՝ հնա-
րաւորութիւն ունենալ սեփական մտաւոր ուժերը
փորձելու, այն էլ՝ անակնկալներով հարուստ ասպա-
րէզում, այնուհետև, երբ հանելուկի իմաստը գտնուած
է, տեսնել, թէ ինչոր այնքան առասպելական, զարմա-
նալի, անկարելի էր համարուած, իսկապէս կայ և ա-
մենաբնական դժերն ունի,—մի՞թէ այս ամենը չի կա-
րող յափշտակել, գրաւել, զարգացնել մանկան և սէր
ննընչել դէպի մտաւոր լարումը:

Վերցնենք, ժողովրդական բանաստեղծութեան
զանձարանից մի քանի հանելուկներ, իբրև օրինակներ,
համախմբելով գրանց համաձայն այն բանին, թէ
ինչին են գրանք վերաբերում.—բնութեանը ընդհան-
րապէս, կենդանական ոչխարնին, մարդուն քե՞ ըն-
տանեկան նիս ու կացին **)

*) Ժողովրդի մէջ տարածուած բազմաթիւ հրաշալի («ա-
ռասպելական») հանելուկները այդ պատճառով անյարմար են քա-
ղաքացի մանուկներ է համար: Այդ հանելուկների համը նրանք չեն
կարողանում հասկա տալ և ինչպէս հարկն է վայելել, քանի որ չեն
ունենում կենդանի, անմիջական տպաւորութիւններ՝ ընուծիւնից
և ամօթի ժողովրդի կեանքից առած:

**) Օրինակն ըր վերցրել են հայկական հանելուկներից:
Թարգմ.

1. Ծովից կենի, ծով կը մանի, հարիւր տեսակ
 ունի ունի, ամեն օր՝ կուլ կը տայ, հազարից մէկ՝ վեր
 կուտայ (ամպ)։—Մանր մանր եկեղեցի, դանակով դար-
 կի՝ դուռը բացի, մտայ ներսը համբուրեցի, քարերը
 դէն թափեցի (ձմերուկ)։—Էն ինչ է,—նիւթ չունի,
 շուտ կը վազի-ոտ չունի. բռնողին օգուտ չունի-
 (սոււեր)։—Սէլով փէտ՝ կացին չի դիպել, թօփով ատ-
 լաս՝ մկրատ չի տեսել, ջլալով ալիւր՝ ջաղաց չի մտել
 (փշատ)։—Ուն ունի, բուն ունի, կաքաւի պէս՝ կտուց
 ունի (սիսեռ)։—Մի տուն ունեմ՝ մէկ սիննանի, հա-
 րիւր հազար տախտակ ունի (սունկ)։—Պատուը կան-
 գնել է առին, քառասուն կարկատան կրծքին (կաղամբ)։

2. Թագաւոր ունեմ հնոց նորոց, գլուխն ունի՝
 ոսկէ քորոց, ելաւ կանչեց ննջեցելոց, Քրիստոս յար-
 րեաւ ի մեռելոց (աքաղաղ)։—Սե է սաթի նման, սպի-
 տակ է կաթի նման, պոչը խաչերկաթի նման (կաշա-
 դակ)։—Կերթայ կուգայ՝ հետք չունի, ետ կը դառնայ՝
 թող չունի, թռչուն է՝ բայց թև չունի, գոմէշ է՝
 սմբակ չունի (օձ)։—Լարը քաշեմ, սալը ժաժ գայ
 (ուխտ)։

3. Երկնքից մէկ մարդ իջաւ, փայտէ ձին տակը,
 օրը երկու գառ կուտի, բայց էլի չի կշտ անայ (մա-
 նուկը օրօրոցի մէջ)։—Օր ու գիշեր չի անի, մարդու
 մօտ քիչ կը կանգնի, ինչքան էլ կուզես վստի, ետիցը
 չես հասնի (միտք)։—Մէկ ձմերուկ կայ, օխտը ծակ
 ունի (գլուխ)։

4. Էստեղ պուպուզ, էստեղ պու ուզ, դոան
 ետեը կուկուզ (աւել)։—Հոգի չունի՝ կը խօսի, ձեռ-

նիւր չունի՝ կաշխատի անգլուխ է, անոտ է, ինչ որ
 իրան՝ տաս կուտի (գրիչ)։—Սարից կուգայ սլվլալէն,
 ոսկէ բեխեր պլպլալէն (գերանդի)։—Ածեցի ածմծեցի,
 բկիս ծակին դէմ արեցի (հաց)։—Չորս ախպէր են մէկ
 վերմակի տակ (քուրսի)։—Կապեմ կերթայ, արծակեմ
 կը կանգնի (տրեխ)։

Հնումը շատ էին տարածւած մի առանձին տե-
 սակ հանելուկներ—խրթին հարցեր, որոնք մեր ժա-
 մանակներում հետզհետէ աւելի և աւելի կորցնում են
 իրենց նշանակութիւնը։ Մանուկը ստանում է իր
 գիտութիւնը գլխաւորապէս դպրոցի միջոցով, և այդ
 տեսակ հանելուկները, որոնցով աւելի շուտ երեխայի
 գիտութիւնն էին չափում, քան թէ նրա խելքը,
 հետզհետէ արագ անհետանում են, քանի աւելի առհա-
 սարակ շատանում է գիտութիւնների պաշարը։

Խրթին հարցերը մեծ մասամբ ենթադրում էին
 որ մանուկը ունի բաւականաչափ տեղեկութիւններ
 գիտութեան այս կամ այն ճիւղից։ Ի նկատի ունենա-
 ով այն, թէ ինչ էր հնում գիտութիւն համարում,
 այդ հարցերը վերաբերում էին գլխաւորապէս սրբա-
 դան պատմութեանը և հաշիւին։ Այդ հարցերով ծնող-
 ները փորձում էին թէ որչափ հիմնաւոր կիրպով են
 երեխաները անցել սրբադան պատմութիւնը և թէ
 արդեօք թւաբանական պարզամտները զարգացրել
 են նրանց մէջ հաշիւ անելու գործնական ընդունակու-
 թիւնը։ Առաջին տեսակի հարցերիցն են օրինակ՝
 «Երկինքը հով, գետինը ծով. ինչպէս եզ էր, որ բերեց
 կով» (Աղամ)։—«Փայտէ բանիք, ջրէ կողպէք, որսը

փախաւ, որսորդը բռնւաւ» (Կարմիր ծովը և իւրայե-
լացիք): Իսկ երկրորդ տեսակի հարցերիցն են՝ օրի-
նակ. «երկու հայր, երկու որդի, պապն ու թոռը
գնացին որսի, երեք կխտար սպանեցին և իրար մէջ
հաւասար բաժանեցին, էնպէս որ ամեն մէկը մի մի
կխտար ստացաւ: Էտ սնց էր (երեքով էին—պապը
որդին և թոռը): Կան և բնապատմական միտք ունեցող
հարցեր. «Այն ի՞նչն է, որ աշխարհի ստեծագործութիւնից
ապրում է, բայց չորս շաբաթականից մեծ չէ: (ամիս)

Այժմ քիչ թէ շատ նշանակութիւն ունեն երկ-
րորդ տեսակի հարցերը, կատակ և երկմիտ հարցերը,
որոնց նպատակն է շփոթեցնել, խճճել*):

Այսպէս ուրեմն, ով որ կամենում է իմանալ թէ
ինչպէս էին կրթում և սովորեցնում հնում, պէտք է
դիմի ժողովրդական հանելուկների և խրթին հարցերի:
հարուստ պաշարին. նրան կը զարմացնի ուսուցման և
կրթութեան հին, դիւրացի պատերից ժառանգած եղա-
նակը. նա կը համոզւի թէ որքան միջոցներն ու նը-
պատակները յարմարեցրած էին ժամանակի պայման-
ներին և պահանջներին, կը համոզւի ժողովրդի իսկոր
հանճարեղ մանկավարժական իմաստութեան մէջ, որից
վատ չէր լինի որ փոխ առնէին մեր ժամանակակից
մանկավարժները:

*) Այս տեսակ հանելուկ հարցերիցն են՝ «Հարելը կաբա-
տեսայ, մէկին սպանեցի. քանիսը լինաց» (մէկը. Մնացածները
փախան): «Ի՞նչիցն է սագը լող տալիս» (ափից): «Ի՞նչպէս մէկ
տանով գրենք միս» (ս):

Չի կարելի մանկական բանաստեղծութեան աշ-
խարհում տեղ չը տալ նաև մանկական խաղերին:

Սաղերի կրթական դաստիարակչական նշանակու-
թիւնը աւելի փոքր չէ, քան թէ մանկական երգերի,
կատակների, ասացածքների, հեքիաթների և հանե-
լուկների, գուցէ նոյնիսկ աւելի է: Քանի աւելի է աշ-
խատանքի բաժանումը կեանքի մէջ պահանջում, որ
դպրոցը տայ աւելի ու աւելի դիտութիւն, խաղը
հետզհետէ դառնում է աւելի և աւելի մանկան
բնական, անհրաժեշտ պահանջ, որպէս ուսման մի
հակակշիռ զբաղմունք, և աչքի առջ ունենալով,
ոչ միայն ֆիզիքական զարգացումը, այլ և բնա-
ւորութեան և կամքի զարգացումը, որը՝ դպրոցա-
կան ուսուցման շնորհիւ, ամենքին միատեսակ ձևի վե-
րածող եղանակի շնորհիւ, աւելի շուտ ընդհատում
խանգարում է, քան թէ դիւրացում: Սաղմնային
գրութեան մէջ գտնուող մանկական անհատական յատ-
կութիւնները արձակ ելքի, ազատութեան պէտք ունեն.
այդ ազատութիւնը, գրեթէ անսահման ազատութիւնը
նրանք գտնում են խաղերի մէջ: Սաղը երեխայի հա-
մար նոյնն է, ինչ որ կեանքը հասակաւորի համար:
Սաղի մէջ մանուկը վարժեցնում և զարգացնում է իր
արիութիւնը, նարագիտութիւնը, գործունէութեան և
ստեղծագործութեան փափագը, օրինականութեան,
կարգապահութեան, արգարամտութեան, անձնէրու-
թեան զգացմունքը, և այս ամենը վարժեցնում և զար-
գացնում է ամենալաւ կերպով, այսինքն յօտարական,
ազգա, ինքնակրօնքեան ճանապարհով:

Մ. քաղզվ. Հեղինակը այստեղ յայտնի չէ թէ ինչու ոչինչ չէ ասում ժողովրդական մանկական բանահիւսութեան մի այլ ճիւղի մասին, որը ոչ պակաս կարևոր նշանակութիւն ունի մանկան սկզբնական դաստիարակութեան համար, այն է՝ առածների, ասուածքների և շուտասելուկների մասին: Առածներն և ասուածքները իրենց մէջ պարունակում են ժողովրդական իմաստութեան մի անսպառ ողաշար, որ դարէ դար անցել է և բիւրեղացած բառական ձևակերպութիւն է ստացել: Ժողովրդական լեզուի լաւագոյն յատկութիւնները մանուսանդ դրանց մէջ են դրոշմւած: Միւս կողմից՝ շուտասելուկներն էլ աչքի առաջ ունեն մի մեծ մանկավարժական նպատակ—այն է զարգացնել և վարժեցնել ձայնական գործարանները, թլւատութեան և կակազութեան առաջն առնել և նպաստել արագախօսութեան:

Չը նայելով որ այսպիսի ահագին նշանակութիւն ունի ժողովրդական բանահիւսութիւնը մանուկ սերունդի դաստիարակութեան համար, այնուամենայնիւ մեր հայկական մանկական գրականութեան մէջ դեռ չենք կարողացել հարկաւոր չափով օգտել այդ աղբիւրից, Մինչև օրս եղել են մի երկու այդպիսի փորձեր, գլխաւորապէս պ. Ղ. Աղայեանի ձեռքով, որոնք մըտել են մեր բոլոր գլորոցական դասագրքերի մէջ: Հայ դաստիարակը ստիպւած է օգուտ քաղել առաւելապէս այն հում նիւթերից, որ ցրւած են զանազան ազգագրական հրատարակութիւնների մէջ, օրինակ, բացի

պ. Ե. Լալայեանի «Ազգագրական Հանդէսից», նաև պ. Տիգր. Նաւասարդեանի «Ժողովրդական հեքիաթներ» 10 գրքոյկների, Գ. Կպ. Սրւանձտեանի գրուածքների, «Էմինեան գրադարանի» մէջ: Մշակւած հեքիաթներից ունենք Ղ. Աղայեանի հեքիաթները (պատկերազարդ) և Ս. Քամալեանի հեքիաթները: Իսկ երգերի, առակների, առածների, շուտասելուկների մշակումը լրջօրէն չի ձեռնարկւած:



~ ~ ~






Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- 1. Խաղալիքներ—տիկ. Պատուս 3.
- 2. Խաղեր—տիկ. Կօրքերստող 7.
- 3. Նկարչութիւն, պատկերազարդ գրքեր—Ֆլօօստ. 13.
- 4. Պատմիւն ու բարձր ձայնով կարգալը—դ՛ր Հօլստ 19.
- 5. Երգեցողութիւն—օր. Կօրնելիուսէն 25.
- 6. Մանկական երգեր, կատակներ, ասացածքներ,
հեքիաթներ, հանելուկներ—Ստօլէն և Մէօ. 33.

Խմբագրեց Ակսէլ Արստալ



7



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- I Երեխայի կրթութիւնը մինչև 6-տարեկան հասակը—
Հենրիկ Վերնիցի. թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ.
- II Երեխայի բուժը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսի-
ցեանի: 15 կ.
- III Երեխայի ազատութիւնը, Կ. Հ. Վենտցելի.—Մե-
ծերն ու փոքրերը—տիկ. Իսահակէնի. թարգմ.
Ստ. Լիսիցեանի: 15 կ.
- IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնը ու կրթ-
ութիւնը—Կ. Ենիցկու, թարգմ. Մ. Ս. Գ. և
Ստ. Լ. 15 կ.
- V Պարզեաներն ու պատիժները ընտանեկան դաստի-
արակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.
- VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—
Գալանդաուէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի: Ծս-
նօթացրէք կեանքի ծագման հետ—Տիկ. Սելմերի,
թարգմ. Ստ. Լ. 15 կ.
- VII Ընտան. դաստիարակութեան նպատակներն և հի-
մունքը. —Պ. Կապտերի, թարգմ. Միս. Աս. 15 կ.

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

50 - Գրադատիչ

« Ազգային գրադարան



NL0228105

45. 377